# ԿՏԱԿ ԵՎ ԸՍՏ ԿՏԱԿԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

**6 հարցերի կարճ պատասխաններ**

## 1 Ե՞ՐԲ Է ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՏԱՐՎՈՒՄ ԸՍՏ ՕՐԵՆՔԻ:

Ժառանգությունը կատարվում է **ըստ օրենքի, եթե չկա կտակ,** կամ դրանում սահմանված չէ ամբողջ ժառանգության ճակատագիրը.

## 2 ԻՆՉՊԵ՞Ս ԳՐԵԼ ԿՏԱԿ:

Կտակը պետք է կազմվի գրավոր և **վավերացվի նոտարի կողմից,** այլապես կտակի կհամարվի անվավեր:
Կտակարարն իրավունք ունի կտակ կազմելուց հետո **ցանկացած ժամանակ վերացնել, փոփոխել** կամ **լրացնել** իր կտակը, ընդ որում նա պարտավոր չէ նշել կտակը վերացնելու, փոփոխելու կամ լրացնելու պատճառները:

## 3 Ի՞ՆՉԸ ԿԱՐՈՂ Է ԺԱՌԱՆԳՎԵԼ (ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԶԱՆԳՎԱԾ):

Ժառանգության զանգվածի մեջ է մտնում ժառանգատուի մահվան օրվա դրությամբ ժառանգատուին պատկանող **գույքը** և **պարտականությունները:**

Կտակ կարող է կազմվել կտակ կազմել **ամբողջ** գույքի, դրա **մի մասի** կամ **առանձին գույքի** կամ իրավունքների վերաբերյալ:

## 4 Ո՞ՒՄ ՕԳՏԻՆ ԿԱՐԵԼԻ Է ԿՏԱԿ ԳՐԵԼ (ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱԺԻՆ)

Քաղաքացին իրավունք ունի **իր հայեցողությամբ ցանկացած գույք** կտակել **ցանկացած անձի,** ցանկացած ձևով որոշել ժառանգությունում ժառանգների բաժինները, զրկել ժառանգությունից ըստ օրենքի ժառանգներին, կտակում ներառել ժառանգության մասին այլ կարգադրություններ, վերացնել, փոփոխել կամ լրացնել կազմված կտակը: Սակայն կտակով **հնարավոր չէ ժառանգությունից զրկել** պարտադիր բաժնի իրավունք ունեցող ժառանգներին:

## 5 ՈՎՔԵ՞Ր ՈՒՆԵՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱԺՆԻ ԻՐԱՎՈՒՆՔ:

Ժառանգության բացման ժամանակ պարտադիր բաժնի իրավունք ունեն ժառանգատուի **անչափահաս երեխաները,** ինչպես նաև օրենքով սահմանված կարգով **հաշմանդամ կամ անգործունակ ճանաչված** կամ ժառանգատուի՝ **60 տարեկան դարձած երեխաները, ամուսինը և ծնողները:**

## 6 Ո՞Ր ԴԵՊՔՈՒՄ Է ԱՆՁԸ ԶՐԿՎՈՒՄ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԻՑ:

**Ըստ կտակի** և **ըստ օրենքի** ժառանգությունից զրկվում են այն անձինք, ովքեր դիտավորյալ խոչընդոտել են ժառանգատուի վերջին կամքի իրականացմանը, դիտավորյալ կյանքից զրկել են ժառանգատուին կամ հնարավոր ժառանգներից որևէ մեկին կամ մահափորձ են կատարել նրանց կյանքի նկատմամբ: Բացառություն են կազմում այն անձինք, որոնց նկատմամբ ժառանգատուն կտակը կազմել է մահափորձ կատարելուց հետո:

Իսկ **ըստ օրենքի** ժառանգության դեպքում ժառանգությունից մեկուսացվում են նաև ծնողական իրավունքներից զրկված ծնողները, որոնց ծնողական իրավունքները չեն վերականգնվել ժառանգությունը բացվելու ժամանակ:

Իրավաբանական կլինիկայի կամ Ձեր իրավունքների մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝
https://www.ufar.am/services/clinique-juridique